ժեք ճանաչված առարկայի արտահանումն արգելվում է: Եթե առարկան ճանաչվում է մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցման ենթակա կամ արդեն գրանցված է, ապա դրա արտահանումը թույլատրվում է, եթե պետությունը մեկամսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից: Ձեռքբերման ենթակա մշակութային արժեքի գինը սահմանվում է՝ ելնելով շուկայական (ողջամիտ) գնից:

Եթե առարկան ճանաչվում է մշակութային արժեք, ապա այն կարող է արտահանվել արտահանման իրավունքի վկայագրի հիման վրա կամ առանց դրա, եթե այն մինչև 50 տարվա վաղեմություն ունեցող և ՀՀ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված հեղինակի ստեղծագործություն չէ, իսկ եթե առարկան չի համարվում մշակութային արժեք, ապա այն կարող է արտահանվել:

> Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը լիազորված պետական մարմնի կողմից տրված փաստաթուղթ է, որը հավաստում է մշակութային արժեքի արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքը:

Պետական թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, պետական այլ պահոցներում մշտապես պահպանվող **պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների** ժամանակավոր արտահանումն իրականացվում է համապատասխան կազմակերպության հայտի հիման վրա կայացված որոշմամբ, որն ընդունում է այն լիազորված պետական մարմինը, որի ենթակայության տակ է գտնվում հայտատուն: Հայտին կցվում են՝

ա) մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման նպատակների և պայմանների մասին ընդունող կողմի հետ կնքված պայմանագրի պատճենը,

բ) ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների ապահովագրումը հաստատող փաստաթուղթը, որը ներառում է վտանգի բոլոր դեպքերը կամ բոլոր վտանգների ֆինանսական ծածկույթն ապահովող պետական երաշխիքի մասին մշակութային արժեքներն ընդունող պետության կողմից ներկայացված փաստաթուղթը,

գ) ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների պահպանման և վերադարձման մասին փաստաթղթով հաստատված՝ ընդունող կազմակերպության կամ պետության իրավասու մարմինների տված երաշխիքները,

դ) պետական պահոցի հաշվառման մատյանում մշակութային արժեքի մասին տվյալները և տեղափոխման հնարավորության մասին նշումը,

ե) ժամանակավոր արտահանման մասին լիազորված պետական մարմնի որոշման պատճենը:

Պետական սեփականություն համարվող մշակութային արժեքի ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը տրվում է հայտը ներկայացնելուց հետո՝ երկու օրվա ընթացքում:

Հայտը մերժվում է, եթե՝

ա) ժամանակավոր արտահանման ներկայացված առարկան համարվում է առանձնակի արժեքավոր մշակութային արժեք,

բ) փորձաքննության եզրակացության հիման վրա ժամանակավոր արտահանման ներկայացված մշակութային արժեքների պահպանվածության աստիճանը թույլ չի տալիս փոփոխել դրանց պահպանման պայմանները,

գ) մշակութային արժեքը գտնվում է արգելանքի տակ,

դ) այն պետությունում, ուր նախատեսվում է ժամանակավոր արտահանել մշակութային արժեքները, տեղի է ունեցել բնական աղետ, առկա են զինված ընդհարումներ կամ մշակութային արժեքների պահպանության ապահովմանը խոչընդոտող իրավիճակներ,

ե) չեն ներկայացվել ժամանակավոր արտահանման հայտին կցվող փաստաթղթերը:

> Ժամանակավոր արտահանված մշակութային արժեքները օտարերկրյա պետություններում գտնվում են ՀՀ դիվանագիտական մարմինների պաշտպանության ներքո:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

> Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում Հայաստանից մշակութային արժեքների արտահանման կարգի վերաբերյալ: Տրվում են մշակութային արժեքների արտահանման ընթացակարգերը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը և այլն:

Մայիս, 2005

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մշակութային ժառանգությունը մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող մշակութային արժեքներն ու մշակութային նշանակության առարկաներն են:

Մշակութային արժեքները մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաներ և ստեղծագործություններ են, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մշակութային արժեքներ են համարվում.

1) պատմական, ներառյալ՝ ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության և պետության զարգացման, գիտության և ճարտարագիտության պատմության, ինչպես նաև նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների, ազգային հերոսների) կյանքին ու գործունեությանն առնչվող առարկաները, ընտանեկան մասունքները,

2) հնագիտական հետազոտություններից և պեղումներից ստացված գտածոները, ինչպես նաև հողային, շինարարական, հողաբարելավման և այլ աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատմահնագիտական առարկաները,

3) գեղարվեստական արժեքները, ներառյալ՝

ա) ամբողջովին կամ մասամբ ձեռքի աշխատանքով ստեղծված պատկերները և նկարները՝ կատարված ցանկացած միջոցով ու նյութերով,

բ) ցանկացած նյութից պատրաստված քանդակները,

գ) ցանկացած նյութից արված գեղարվեստական հորինվածքները և համակցված կառուցվածքները (մոնտաժներ),

դ) պաշտամունքային նշանակություն ունեցող գեղարվեստորեն ձևավորված առարկաները, ներառյալ՝ սրբապատկերները (իկոնաներ),

ե) փորագրությունները, փորագրանկարի արտատպությունները, վիմատպությունները և դրանց այլ դրոշմվածքաձևերը,

զ) կիրառական արվեստի գործերը, ներառյալ՝ ապակուց, կավից, փայտից, երկաթից, ոսկրից, գործվածքեղենից և այլ նյութերից պատրաստված գեղարվեստական իրերը,

է) ավանդական ժողովրդական արհեստների ստեղծագործությունները,

4) պատմական և գեղարվեստական, ներառյալ՝ գրական հուշարձանների բաղկացուցիչ մասերը և բեկորները,

5) ձեռագիր և տպագիր գրական, պատմագիտական, պաշտամունքային արժեք ներկայացնող հուշարձանների բաղկացուցիչ մասերը և բեկորները,

6) առանձին կամ հավաքածու հնագույն գրքերը, փաստաթղթերը,

7) հազվագյուտ ձեռագրերը և փաստաթղթային հուշարձանները, արխիվները, ներառյալ՝ ձայնագրման, տեսագրման, լուսանկարչական և կինոարխիվները,

8) երաժշտական գործիքները,

9) առանձին կամ հավաքածու փոստային նամականիշերը, այլ նամականիշային նյութեր,

10) հնագույն առարկաները՝ գործիքներ, կավագործական իրեր, մակագրություններ, դրամներ, շքանշաններ, մեդալներ, կնիքներ, զենք, ինչպես նաև հավաքածուի համար նախատեսված այլ առարկաներ,

11) բուսական, կենդանական և երկրաբանական հավաքածուները և նմուշները, հանքաբանության, անատոմիայի և հնէաբանության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաները,

12) կահույքը, գոբելենները, գորգերը, կարպետները, տարազները,

13) ազգագրական, մարդաբանական նյութերը և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուները, հնատիպ հրատարակությունները,

14) ճարտարապետական և կոթողային արվեստի հուշարձանների բաղկացուցիչ մասերը և բեկորները,

15) այլ առարկաներ, ներառյալ՝ պատմական, գեղարվեստական, գիտական կամ մշակութային այլ նշանակություն ունեցող պատճենները, որոնք, որպես պատմության և մշակույթի հուշարձաններ, վերցված են պետական պահպանության տակ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՀՀ տարածքից **արգելվում է** արտահանել ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից:

Մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում, ենթակա են արտահանման միայն այն դեպքում, երբ ՀՀ-ն մեկամսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից:

Մշակութային արժեքների պահպանական ցուցակը պետական պահոցներում գրանցված, ինչպես նաև պետական սեփականություն չհամարվող և ոչ պետական պահոցներում պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների ռեգիստր է:

ՀՀ պետական պահոցներում՝ թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, մշտապես պահպանվող մշակութային արժեքները կարող են արտահանվել միայն ժամանակավորապես:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Պարզեցված կարգով, այսինքն, առանց արտահանման իրավունքի վկայագրի կամ լիազոր պետական մարմնի կնիքով վավերացված լուսանկարի, կարող են արտահանվել՝

մինչև 50 տարվա վաղեմություն ունեցող՝ կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները, այդ թվում՝ մշակութային արժեքները, բացառությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների, ՀՀ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված մահացած հեղինակների ստեղծագործությունների, ինչպես նաև կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ու մշակութային նշանակության առարկաների անթվակիր և անստորագիր ստեղծագործությունների:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքներ.

Արտահանվելիք առարկաներն անցնում են փորձաքննություն, որն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք: Փորձագիտական եզրակացության հիման վրա պետական լիազոր մարմինը կայացնում է համապատասխան որոշում:

Որպես առանձնակի արժեքավոր մշակութային ար-